

**ԴԻՄՈՒՄ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ\***  
**Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու**

«ԿՈՄՊԱՐԱՆՏ» ՍՊԸ-ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցել **ԷԿՈՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ**-ի կողմից «ՇՄԵՊԾ-ԷԱՃԱՊԶԲ-25/24» ծածկագրով հայտարարված Էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի (այսուհետ՝ ընթացակարգ) **1-ին** չափաբաժին (չափաբաժիններին) և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

«ԿՈՄՊԱՐԱՆՏ» ՍՊԸ-ն հայտնում և հավաստում է, որ հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ:

«ԿՈՄՊԱՐԱՆՏ» ՍՊԸ-ի՝

- հարկ վճարողի հաշվառման համարն է՝ 00927169
- բանկային հաշվեհամարն է՝ 205002255011001
- գործունեության հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Վարդանանց փակուղի 8
- Էլեկտրոնային փոստի հասցեն է՝ [info@compgarant.am](mailto:info@compgarant.am)
- հեռախոսահամարն է՝ +37443660667
- ռուսերեն լեզվով անվանումն է՝ ООО КОМПГАРАНТ

Սույնով «ԿՈՄՊԱՐԱՆՏ» ՍՊԸ-ն հայտարարում և հավաստում է, որ՝

1) «ԿՈՄՊԱՐԱՆՏ» ՍՊԸ-ն և իրեն փոխկապակցված անձինք բավարարում են «ՇՄԵՊԾ-ԷԱՃԱՊԶԲ-25/24»\* ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և «ԿՈՄՊԱՐԱՆՏ» ՍՊԸ-ն պարտավորվում է ընտրված մասնակցի ճանաչվելու դեպքում, ընթացակարգի հրավերով սահմանված կարգով և ժամկետում ներկայացնել որակավորման ապահովում<sup>1</sup>

2) ընթացակարգին մասնակցելու շրջանակում՝

- թույլ չի տվել և (կամ) թույլ չի տալու անբարեխիղճ մրցակցություն, գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն,

- բացակայում է հրավերով սահմանված՝ «ԿՈՄՊԱՐԱՆՏ» ՍՊԸ-ին փոխկապակցված անձանց և (կամ) «ԿՈՄՊԱՐԱՆՏ» ՍՊԸ-ի կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս «ԿՈՄՊԱՐԱՆՏ» ՍՊԸ-ին պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության դեպք:

- ստորև ներկայացնում է հայտը ներկայացնելու օրվա դրությամբ այն ֆինանսական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավել քան տասն տոկոսը, ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը, կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին, կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին (իրական շահառուներ)\*\* և հավաստում, որ իրական շահառուների մասին ներկայացված տեղեկատվությունը իրական է և չի պարունակում ոչ հավաստի տեղեկություններ:

---

<sup>1</sup> Եթե կիրառվում է սույն հրավերի 1-ին մասի 2.4 կետի 2-րդ նախադասությամբ նախատեսված կարգավորումը, ապա << պարտավորվում է ընտրված մասնակցի ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել որակավորման ապահովում.>> բառերը փոխարինվում են <<կամ սույն ընթացակարգի շրջանակում վերջինիս կողմից՝ որպես պաշտոնական ներկայացուցիչ, մատակարարվող ապրանքներն արտադրող կազմակերպությունը, հայտերը բացելու օրվա դրությամբ ունի միջազգային հեղինակավոր կազմակերպությունների (Fitch, Moodys, [Standard & Poor's](#)) կողմից շնորհված վարկունակության վարկանիշ առնվազն Հայաստանի Հանրապետությանը շնորհված սուվերեն վարկանիշի չափով:>> բառերով: Ընդ որում՝ նշվում է նաև վարկանիշի չափը և վարկունակության վարկանիշ ունեցող կազմակերպության անվանումը:

Անունը Ազգանունը Հայրանունը	ՀՀ քաղաքացիների համար՝ Նույնականացման քարտի կամ անձնագրի կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը	Օտարերկրյա քաղաքացիների համար համապատասխան երկրի օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը
Նարեկ Կարապետյան Փափագի	Նույնականացման քարտ՝ 010902179	

3) ապահովված է դիմում-հայտարարությունը ներկայացնելուց հետո էլեկտրոնային աճուրդի համակարգի կողմից տրամադրված եզակի ծածկագրի (PIN կոդը) անվտանգությունն ու գաղտնիությունը և դրա օգտագործմամբ էլեկտրոնային աճուրդի համակարգում ընթացակարգին մասնակցելուց բխող ցանկացած գործողություն կատարվում է համապատասխան լիազորություն ունեցող անձի կողմից:

**«ԿՈՄՊԳԱՐԱՆՏ» ՍՊԸ-ի** կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը ներկայացվում է՝ համակարգի միջոցով:

**«ԿՈՄՊԳԱՐԱՆՏ» ՍՊԸ**  
տնօրեն Գևորգ Տեր-Հովհաննիսյան